ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵՍ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 3 ՆՈՅԵՄԲԵՐ 1873 ԹԻՒ 974

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ մէջ միապետական կուսակցութիւնը՝ որ յաղթանակ տանելու մեծապէս յոյսեր ունէր, ազգին բարոյական ազդեցութեանը դէմ դնելչկրնալով՝ իւր նպատակը փոխեց, այսինքն թագաւորական վերանորոգութիւնը թող տալով առայժմ, Մաք—Մահոն մարաջախտին նախագահական իշխանութիւնը մինչև տասը տարի երկարաձգելու կաշխատի, և ըստ երևմանց պիտի յաջողի իւր այս աշխատութեան մէջ։

Սակայն միապետականաց յաջողելոյն յոյսը այնքան մեծ էր և Շանպօրի դուքսը՝ Գաղղիոյ թագաւորական ամիսուոյն վերանորոգութեան վերայ այնքան մեծ վստահութիւն ունէր, որ փութացաւ՝ իբրև թագաւոր Գաղղիոյ, ծանուցանել Իտալիոյ և Գերմանիոյ կառավարութեց թէ՝ իւր նախահարց ամիսոը բազմելուն՝ ամենեին փոփոխութիւն մի ընելու ձեռք պիտի չզարնէ, այլ ընդհակառակն պիտի ընդունի և հաստատուն պիտի պահէ Եւրոպիոյ իրաց այժմեան կացութիւնը։

Ելևմտից տեսուչ մսիւ Մոյն պաշտօնէին յայտարարին համեմատ՝ Գաղղիոյ 1874ին պիւտժէն 2523 միլիոն ֆրանքի պիտի հանի։ Այս գումարին պակասը պիտի հոգացուի առժամանակեայ նոր արոց միջոցաւ, և զանազան պաշտօնարանաց ծախքը նուազեցնելով. և այս կերպիւ՝ 1874ին պիւտժէին պակասը լեցուելէ ետև, եկամտից գումարէն 16 միլիոն ֆրանք պիտի աւելնայ ըստ վերոյիշեալ յայտարարին։

Եւրոպիոյ գլխաւոր մայրաքաղաքաց մէջ ինչպէս նաև Ամերիկայի մէջ առևտրական և դրամական տաղնապը վերջին աստիճան ծանրացած է։ Այս պատճառաւ, մեսաղեայ դրամը երթալով հազուագիւտ կըլլնի և շատ կըվնասուի։ Անգղիոյ Պանքան՝ իրմէ հետզհետէ խնդրուած պարատ դրամոց գումարը նուազեցնելու նպատակաւ, դրամազեղչին գինը հարիւրին 8ի, 9ի և մինչև 10ի բարձրացոյց։

Յայտնի է թէ անցեալներն Գերմանիոյ կայսրը՝ Ս. Պապին մէկ նամակին պատասխանելով ըսած էր թէ՝ «մեծապէս կըսխալիք կարծելով թէ Գերմանիոյ կղերին դէմ իմ կառավարութեան բռնած ընթացքը՝ առանց իմ գիտութեան և հաւանութեանն է։ Բրուսիոյ Սահմանադրութեան համեմատ՝ այդ բանն անկարելի է. վասն զի վարչական օրէնքն և կարգադրութիւնքն՝ 'ի Բրուսիա, կարօտ են թագաւորական յատուկ հաւանութեանս»։ Յաւելցուցած էր նաև թէ օրինազանց եկեղեցականք պիտի պատժուին միշտ ըստ արամադրութեանց հաստատեալ օրինաց։

Անգղիոյ լրագիրք երկար խորհրդածութիւններ կընեն յիշեալ ազգու պատասխանին վերայ. զոր գովութեամբ յառաջ կբերեն։ Լոնտոնի Թայմս օրագիրը կըսէ թէ Անգղիան՝ Հռոմի առջև, գրեթէ միևնոյն կացութեան մէջ կըգտնուի՝ որպէս Գերմանիան։ Վասնզի պապական կառավարութիւնն, կըյաւելու նա, կըդաշնակցի Անգղիոյ խռովասէր ամեն անձանց հետ, հետևաբար պապութիւնը հասարակաց թշնամին է. որոյ դէմ Եւրոպիոյ բոլոր տէրութիւնք կըպարտաւորին դաշնակցութիւն հաստատել մէջերնին։ Միևնոյն դաղափարներով կըգրեն Գերմանիոյ և Աւստրիոյ լրագիրներն։

Անգղիոյ Թագուհին գալ տարւոյն Յունուար ամսոյն մէջ՝ 'ի Բէդէրսպուրգ պիտի դտնուի. ուր իւր երկրորդ որդւոյն էտինպուրգի դքսոյն ընդդատեր Զարին ամուսնութեան հանդէսն նոյն ամսոյն մէջ փառաւորապէս պիտի կատարուի։ Այս հարսնական շքեղ հանդիսին ներկայ պիտի գտնուին նաև Գերմանիոյ թագաժառանգ իշխանն և իշխանուհին, որ Վիքտորիա թագուհւոյն դուստրն է։

Ռուսիոյ դեսպան 'ի Կ. Պոլիս՝ վսեմ. Իգնաթիէվ զօրապետն և իւր տիկինն դեսպանուհին, որք պատիւ ունեցան հրաւիրուելու յօդստաւաւ Զարէն, քիչ ժամանակէն 'ի Բէդէրսպուրգ պիտի երթան՝ կայսերական դերդաստանին այս ընտանեկան ուրախութեանը մասնակից լինելու։

Սպանիոյ կացութիւնն ամենևին չբարւոքեցաւ. ընդհակառակն համադգային արիւնահեղ պատերազմը կըշարունակուի և Քարլոսեանք՝ այսինքն ապստամբները միշտ տէր են զանազան նահանգաց. զորս հասարակապետական կառավարութիւնը չկրցաւ ցարդ իւր իշխանութեան ներքև առնուլ։ Կարթագինէի ապստամբական խռովութիւնը տակաւին չըսպուեցաւ։

Եւրոպիոյ մեծ տէրութիւնքն, ինչպէս յայտնի է, պիրալիը յարաբերութեամբ կապուած են իրարու հետ և ընդհանուր խաղաղութիւնը ապահովուած կերևի. այսու ամենայնիւ զինուորական և պաշտպանողական պատրաստութիւնքն անդադար կըշարունակուին։ Գերմանիան, Գաղղիան, Իտալիան, Ռուսիան, Աւստրիան, ինչպէս նաև ուրիշ տէրութիւններն՝ դրեթէ ամենքն ալ, կըպատրաստուին իբր թէ ընդհանուր պատերազմի մը հրատարակութեան նախընթաց օրն լինէր։ Իրաց այս վիճակը՝ որ տէրութեանց իրարու վերայ վստահութիւն չուներնալուն անժխտելի ապացոյցն է, իրաց այս վիճակն, կըսեմք, յոյժ ցաւալի է ժողովրդոց համար որոց վերայ կըծանրանան բոլոր ծախքն յիշեալ զինուորական պատրաստութեանց։

Եթէ 'ի խաղաղութեան ապրիլ կուզես, պատրաստ եղիր միշտ 'ի պատերազմ, կըսէ լատինական առածն. ուստի Եւրոպիոյ մեծ տէրութիւնքն ևս՝ իրարու նայելով, ամենքն ալ այս դրութեան հետևիլ ապահով համարեցան. որ սպառազինեալ խաղաղութիւն ըսել է։

Հեռագիրը կըծանուցանէ թէ Մաք—Մահոն մարաջախտին նախագահական իշխանութեան մինչև 10 տարի երկարաձգիլը՝ ընդունուեցաւ Գաղղիոյ երեսփոխանական ժողովէն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՄՐՄՈՒՆՋ ՍՄԲԱՏԱՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻՆ

Ես ո՞ւր իյեմ չուառականս, խուարչտին 'ի բանտի,
Զուրկ 'ի փառաց 'ի սիրելեաց հիւծիմ 'ի տար աշխարհի։
Ես կարի քաջ, ահա զվրէժ ես լուծանեմ զչարեաց,
Զոր հաստատի անմտութեամբ իմոց թշուառ հայրենեաց։
Զայս ազգ առնէր ինչ յարաժամ նաև պատգամ տէրունին,
Զոր ինչ չափեաս քո ընկերին, քեզ չափեսցի գլխովին։
Ո՞հ, երկուցեալ 'ի հրդեհն Սարակինոս գազանաց,
Ընդհամարդիս իմ մատնեցի պատրեալ խաբեալ 'ի փառաց։
Սպարապետս ազգին Հայոց 'ի բանտ կապանս արդ անկայց,
Մինչ խորհէի թագաւորել ես 'ի վերայ հայկազանց։
Ես առաջնորդ գտայ չարեաց, որով եղծաւ Հայաստան,
Ուստի զարդիս ըստ արժանեաց կրեմ տանջանս դառնութեան։
Դեր քան Վատակ և Մեհրուժան եղէ մատնիչ հայրենեաց,
Հատի զարև իմ համազգեաց, կալայ զիշխանն հայկազանց։
Վտարանդի ածի ընդմս առ թագաւորն բռնաւոր,
Զի յուսայի 'ի տրիտուր առնուլ պարգև երկրաւոր։
Ահա ընծայ ինձ արժանի, յուսս իմ չզթայ արկանեն,
Բռնադատեն թողուլ զՔրիստոս, պաշտօն տանել Մահմետին։
Այլ քաւ յինկն չ'թողում զլոյս, չ'երթամ զկետ օտարի,
Մեռայց զարդիս ես 'ի վերայ իմ օրինաց հայրենի։
Ընկա՛լ զիմ ուխտ սրբանուէր իմ անձկալի Հայաստան,
Մեռցի Սմբատ խոստովանող, այլ դու կեցցես յաւիտեան։

Ի Շուշի, 11 Օգոստոսի 1873 Աշակերտ երրորդ դասարանի
ազգային հոգևոր դպրոցին Հայոց Ղարաբաղու,
Արշակ Շխիեանց։

ԻՄ ՕՐՕՐՈՑ

Զկի երբեմն, այլ եմ զարդիս, ծնայ մանուկ հոլանի,
Իշխանաձարուրս ես պատեցայ, զթով անոյ մայրենի։
Յաղբերակէ ստեանց իմ մոր ես ծծեցի քաղցր ըզկաթ,
Ծնողական սուրբ համբուրիւ միշտ գգուեցայ խանդակաթ։
Մինչ ես մանուկ յօրօրոցի, մայր առ ընթեր իմ բաղմէր,
Ի լսելիս իւր որդեկին զօրօր օրօր նուագէր։
—Եկ քուն անոյշ զուարթարար, սփոփեա՛ զանմեղ իմ մանկիկ,
Զաչօք նորին փութա՛ շնչեա՛ զքո սողոմ քաղցրասիք։
Ես ննջէի մայր իմ արթուն զիւրքն օրօր գեղգեղէր,
Եւ 'ի յերկնից զերկայնութիւն ամայ որդւոյն աղերսէր։
Ընդ լալ անմեղ իւր հրեշտակին նորա ազիկ գալարէր,
Եւ կաթողին գորովանօք դարձեալ զօրօր յօրինէր։
Ո՜հ զի՜նչ յայնժամ հրճուանք 'ի դէմս իմոց խաղայր ծնողաց,
Յորժամ զգնայս ոսկից իմոց տեսանէին աչք իւրեանց։
Թոռնով բարբառ իմ մանկական մինչ ըսէին խայտային,
Մայրիկ, հայրիկ, քաղցրիկ անուանք 'ի բերանոյս հնչէին։
Այսպէս խնդայ և այգեպան մինչ նորատունկն ցայուլ,
Զոր ժրաջան ձեռք իւր տնկեայ սնոյց 'ի ծոց պարտիզի։
Անցին զինև. ամք մանկութեան, մտի յայնժամ յայս դպրոց,
Ծծել զկաթէն մտաւոր յայս հոգևոր օրօրոց,
Փոխան ծնողաց ղաչխատասէր դասախարակս զտի նոր,
Որք յարաժամ հնչեն յունկն իմ զուսման քաղցրիկքն զօրօր,
Լուայ զանուն սուրբ կրօնիս, ուսայ զանուն Հայութեան,
Արդ պապաջեմ, արդ թոռովեմ զիմ ցանկալի Հայաստան,

Ի Շուշի, 11 Օգոստոսի 1873։ Աշակերտ երրորդ դասարանի
ազգային հոգևոր դպրոցին Հայոց Ղարաբաղու,
Սամփսոն Աբաբեկեանց։

Փառաւոր հացկերոյթ մի Օսմանայի մէջ, 'ի պատիւ վսեմափայլ Իկնաթիեվ զօրապետին :

Վերջին անգամ Լիմատիայէն 'ի Կ. Պոլիս վերադառնալու համար՝ վսեմ. Իկնաթիեվ զօրապետը Օսմանայէն անցնելուն, նոյն քաղաքին հասարակութեան կողմանէ մեծ ու փառաւոր հացկերոյթ մի տրուեցաւ 'ի պատիւ Նորին Վսեմութեան :

Այս բարեբաստիկ առթիւ, Կ. Պոլսոյ Ռուսիոյ դեսպանն առաջին առաջարկութիւնն ընելով ըմպել 'ի կենդանութիւն օգոստափառ Սուլթանը կայսեր, այսպէս խօսեցաւ.

«Ռուսիոյ մէջ զովելի ու նուիրական սովորութիւն մի եղած է սկսեալ ամեն բարի գործ՝ մաղթանօք և աղօթիւք առ Աստուած, նմանապէս ամեն հայկերութի և ուսնախմբութեան մէջ գինի խմել առաջարկել վասն կենաց առատագութ վեհապետին մերոյ : Եւ ճշմարիտ, իրաքանչիւր Ռուս ուրիշ որո՞ւ կենդանութեան համար կը-պարտաւորի բարեմաղթութիւն ընել և առաջին գինին ըմպել՝ եթէ ոչ վասն կենաց Զարին, ազատչին դերեաց, նոր կենաց երջանիկ ճանապարհ բացողին վասն Ռուս ժողովրդոյ : Ստուգիւ՝ պատմութիւնն փառաւոր տողեր կը պատրաստէ մեր օգոստա. Ինքնակալին համար, ազատութիւն պարգևողին գիւղականաց, ինքնավարչութիւն շնորհողին քաղաքաց, հասարակութեանց և գիւղերէն, հիմնադրողին անաչառ դատաստանարանները որք իրաւունք կը հատուցանեն ամենուն՝ շտով և հրապարակաւ ; զՌուսիան երկաթուղիներով ծածկողին՝ որք ընդեցին մեր երկրին տկարութիւնը՝ այսինքն զմեծ տարածութիւնը՝ զօրացուցանելով գիւրին հաղորդակցութեամբ՝ մեր մեծ կայսերութեան ընդարձակ նահանգները. վասն կենաց վեհապետին՝ որ զօրաւոր մղումն տուաւ արուեստից և ինքնավարչութեան ժողովրդեան, որ զհարաւային ծով մեր վարդագոյն Ռուսիոյ՝ առանց արիւնահեղութեան, բացաւ մեր վաճառականութեան առջև զԼինաստան և զԿեդրոնական Ասիան, և տասնամեակից զզօրութիւնս մեր՝ խաղաղութեամբ, արդարութեամբ և մեծահոգի քաղաքականութեամբ : Ուստի իրաքանչիւր գիւրազգայ և իրաքանչիւր ծընողաբիր զաւակ հայրենեաց՝ կը պարտաւորի 'ի խորոց սրտի աղաղակել, «Կեցցէ՝ 'ի բազում ամս կայսրն՝ հանդերձեալ իւր օգնական. գերդաստանաւն, և 'ի բարօրութեան և յուրախութեան յարատևեսցեն միշտ»:

Այս բարեմաղթութենէ ետև, որուն ամենայն ջերմեռանդութեամբ մասնակից եղան բոլոր սեղանակիցք, Ռուսիոյ, աղգային երգը երգուեցաւ 'ի զինուորական նուագածուցս խմբէն :

Իկնաթիեվ զօրապետէն ետքը՝ Օսմանայի քաղաքապետ մեծաշուք Նովոսելքի ասպետն առաջարկելով գինի խմել 'ի կենդանութիւն Ն. Վսեմութեան, յառաջ բերաւ զգովելի յատկութիւնները Ռուսիոյ դեսպանին Կ. Պոլսոյ, և անոր մատուցած ծառայութիւններն թէ՛ առ կայսերական Սթոռն և թէ՛ առ Ռուսիոյ երկիրն. նմանապէս յառաջ բերաւ Նորին Վսեմութեան բարեյաջող յարատև ջանքը, որով կարող եղաւ զարդացնել և հաստատուն պահել զբարեկամական յարաբերութիւնները երկու դրացի տէրութեանց մէջ :

Օսմանայի քաղաքապետին զրուցածներուն պատասխանելով, Իկնաթիեվ զօրապետը հետևեալ քաղաքային դեղեցիկ ատենախօսութիւնն ըրաւ, զոր 'ի յանարկէտ թարգմանելով կը հրատարակեմք, մեր ընթերցողաց ծանր ուշադրութիւնը հրաւիրելով անոր վերայ :

«Թոյլ տուք ինձ, տեարք, 'ի պատասխանի ինձ համար այս զրուցուածներուն, քանի մը անկեղծ բառեր արտասանել՝ իմ խորին շնորհակալութիւնս յայտնելու համար վասն պատուոյն որ կը մատուցուի ինձ :

«Արդէն երկրորդ անգամն է որ կը պատուէ զիս Օսման իւր հիւրընկալութեամբը. առաջին անգամ յամին 1869ին, երբ ձեր քաղաքէն անցայ 'ի Բէղէրսպուրգ երթալու համար, և այսօր յանցանէն իմ բարեհաճեցայք պատուել զիս ձեր մարդասէր հրաւիրանքը : Դրեթէ յերից ժամուց հետ հասած լինելով ասա, վաղը ճամբայ կելլեմ 'ի Կ. Պոլիս երթալու առ 'ի շարունակել զպաշտօն իմ, զոր՝ ինը տարիէ ի, 'ի գործ կը ընեմ ըստ կարողութեանս : Բոլորով սրտիս երախտագէտ եմ ձեզ վասն բարի համարմանը որով կը պատուէք զիս. սակայն ես չեմ կրնար ուրանալ զանտարտութիւնն՝ իմ անձին յատկացնելու զայդ պատիւ : Դուք 'ի մի ժողովեալ հաճեցայք ձեր համակրական զգայմունքը յայտնել վասն բարի, անշահասէր և մեծատոգի քաղաքականութեան կայսերմերոյ, որոյ փոխանորդի պարտքը կը կատարեմ 'ի Կ. Պոլիս, միանգամայն բարեհաճեցայք ձեր գովութիւնը մատուցանել ինձ վասն բարենախանձ ջանիւք և հաստատամտութեամբ 'ի գործ դնելուս զպատուիրանս, որք տրուած են ինձ յօգոստափառ Զարէն :

«Նորին Վեհափառութեան իմ վերայ ունեցած մեծագին վստահութիւնն և ջերմեռանդ հաւանութիւնն ու համակրութիւնն քաղաքակցայ՝ լաւագոյն վարձատրութիւնն է կառավարութեան պաշտօնէի մը, որ շատ տարիէ 'ի վեր շարունակաբար կը վարէ զպաշտօնս և ինչ ինչ տեսութեամբ զապերախտ պաշտօնն Ռուսիոյ դեսպանի 'ի Կ. Պոլիս : Եւ ուրիշ որո՞ւ վերայ կրնայ նայեցուլ, եթէ ոչ իւր քաղաքակցացը վերայ : Որչափ ուրեմն տխուր պիտի լինիր նորա պաշտօնն եթէ նոյնիսկ քաղաքակիցք իւր գործակից լինելով նորա բնական հակառակորդացը, 'ի միասին քարկոծէին զնա : Այնուհետև անկարելի է որ զոհ ընէ զամենը ընդհանրապէս՝ Ռուսիոյ դեսպանն Կ. Պոլսոյ. ուր բազմաթիւ են իրարու հակառակ օգուտներ : Քաղաքականութիւնն՝ առաջին անգամ մեծամեծ, պարզ բան մի կերևի, և այս պատճառաւ հասարակութիւնը գիւրին կը կարծէ գործադրել զայն ըստ փափաքանաց : Սակայն մարդկային գիտութեանց ուրիշ որ և է ճիւղ մի առաւելագոյն զատաքննութեանց ենթարկեալ չէ՝ որպիսի է քաղաքականութիւնն : Եւ այս բանը վերատակարէ կճռատ և բազմաշփոթ խնդրոց, Արևելքի վերաբերելոց : Քաղաքականութեան մէջ ոչ համաձայնութիւն կը պահանջուի և ոչ բորբոքումն, այլ ընդհակառակն ուշադրութիւն առանց կրից և ճիշտ ծանօթութիւն իրաց և տեղական օգտից, որք յԱրևելս մեծապէս հակառակաց են և իրարամարտ :

«Ուրիշ որ և է երկրի համար այնչափ սխալ դաղափարներ և այնչափ նախապաշարումներ տիրած չեն որչափ Թուրքիոյ համար, և մասնաւորապէս 'ի Կ. Պոլիս տեղի ունեցած խնդրոց համար : Գործնական կենցաղավարութեան ծանօթ իրաքանչիւր անձն՝ գիտէ թէ մեծաղիրին բան է կրկնել զսովորական ասացուածները, բայց միանգամայն չկայ ուրիշ դժուարագոյն բան 'ի մտքաւելէ ընդդէմ նախապաշարմանց, ծածկելոյ 'ի խորս նոյն ասացուածոց, որք ըստ մեծի մասին 'ի չարամտութենէ հնարեալ են և կը կրկնուին 'ի տգիտութենէ :

«Արևմտեան երկիրներուն մէջ արդէն սկսան թողել զնախապաշարումներն 'ի մասին կարծեցեալ ներգործութեանց Ռուսիոյ Արևելքի մէջ և արդարացընել զնոսա, բարձր և անշահասէր քաղաքականութիւնը Զարին : Այս արդիւնքը՝ Նորին կայսերական Վեհափառութեան խոհական ընթացքին պատճառն է : Բայց և այնպէս տակաւին այսօր օտար լրագրաց մէջ կը տեսնուին յօդուածներ, որք ըստ հաճոյս կը նկարագրեն Ռուսիոյ դեսպանին իրաքանչիւր քայլը Արևելքի դրոցոյ մէջ. ինչպէս՝ օրինակի համար, Ռուսիոյ կարծեցեալ փառասէր յատակագիծներն Անատոլի մէջ, և մասնաւորապէս զվերանորոգութիւնն հռչակաւոր գաղտիարաց վասն հանրասալաւութեան. զորս չարամիտ անձինք կը տարածեն ամեն կերպ տեսութեամբ՝ խարդախելով զյայտնի ճշմարտութիւնն, որ կապացուցանէ այս ամեն մեղադրանաց անհիմն լինելը : Բայց յիշել չարամիտ անձինքն ամենեին հոգ չեն տանիր ուրիշ բանին և արդարութեան վերայ : Մեր հակառակորդները չեն դադարիր 'ի կրկնել՝ գիտութեամբ կամ անգիտութեամբ զանազան ասացուածներ, զորս ամենայն ինչ ուրեմն ունի ինչ ինչ հիմունք

թեամբ, զմեղադրանքը որ անգամ մի սարսափուած է։

«Բայց՝ փա՛ռք Աստուծոյ, Ռուսիան զբաւոր է, և զրպարտութիւնը չկրնար ընկճել զնա։ Աղտա կը թողումք, ուրեմն, Եւրոպիոյ օրագիրներն պոյծալի մթութիւն ըստ կամաց իւրեանց, և իրենց կենցաղագէտ անձանց վերայ յեցուցանելով զիարհրդածութիւնս իւրեանց՝ ի մասին այսպիսի անմիտ գրուցուածոց՝ մոլորին և խաբուին ըստ հաճոյից։ Իսկ մեր քաղաքականութիւնն Թուրքիոյ նկատմամբ, յայտնի է լիրև զոյս և գիւրիմանալի ամենուն համար՝ որք կուզեն ճանաչել զնշմարութիւն։ Թուրքիոյ հետ ունեցած մեր բարեկամական զրոյցի յարաբերութիւններն խիստ բարւոք վիճակի մէջ կը գտնուին. և այս վիճակը հաստատուն պիտի մնայ միշտ ցորչափ որ Բարձրագոյն Դրան առաջին պաշտօնեան ականջ չկախեր մեր հակառակորդաց թելադրութեանցը։ Մեք ամենեին կարօտութիւն չունինք ո՛չ օտարին թշնամի երկրին և ո՛չ բան մի կուզեմք մեզ համար։ Վասն զի թիւրոտաբար եղարաց մերոց մեր ունեցած համակրութիւնը քաղրովին անվնաս է։ Իւրայանչիւրոյն համար բարութիւն և արդարութիւն կը փափաքիմք և ո՛չ ուրուք վնասը կուզեմք։ Ոչ ունիք թոյլ կուտամք որ մեր վերայ յարձակի, բայց և ոչ մեկուն վերայ յարձակիլ կը փափաքիմք։ Աստուածային Նախախնամութեամբ սահմանուած է որ Ռուսիան զբաւոր լինի Թուրքիոյ. որում կրնան, ապագային մէջ, վնաս հասցնել նոքա միայն որք կուզեն իրարու զէմ զրգռել այս երկու սահմանակից երկրները։

«Բիչ ժամանակ է, յորմէ հետէ մեք նախնատաս եղաք մարդասիրական ընդունելութեանն, զոր մեր Ինքնակալը մատոյց Բարձրագոյն Դրան արարոյ կարգի դեսպան վոն. Ռաչիտ փաշային. զուք ինքնին կարող եղայք՝ ի մօտոյ դնահատելու զդիրազանց յատկութիւններն և զհամակրական բնաւորութիւնն այս կենցաղագէտ անձին՝ արտաքին զործոց պաշտօնէին, կրնամ՝, որ թող տաք ասա պատուական յիշատակներ, և սիրելի է ինձ հաստատել թէ Օսմանն ևս հաճելի տպաւորութիւն մի ըրաւ Նորին Վսեմութեան վերայ։

«Արշաւի և խօսք տարածեցին մեր հակառակորդները յընթացս ինամեայ բնակութեան իմոյ՝ ի Թուրքաստան, կարող եմ ես ապահովել ձեզ թէ ամենեին ծանր վէճ մի չունեցայ Բարձրագոյն Դրան հետ։ Օսմանեան կառավարութեան հետ ունեցած յարաբերութեանցս մէջ միշտ և հանապազ աշխատեցայ տկարացնել զնախապաշարումներն՝ որք ներշնչեցան Թուրքիոյ կենցաղագէտ անձանց՝ ի թշնամեաց և՝ ի խորամանկաց։ Աստիճանաբար ամպերը փարատեցան և մեք այժմ բարեկամական խիստ մտերիմ յարաբերութեանց մէջ կը գտնուիմք ընդ կառավարութեան օգոստափառ Սուլթանին։

«Կարող եմ հաստատել ձեզ թէ՝ իւրաքանչիւր ուղղադատ Մահմէտական կը հասկանայ այժմ թէ աւելի զործնական է խաղաղութեամբ և սիրով ապրիլ մեզ հետ քան թէ ցրտութեամբ վարուիլ և ականջ կախել՝ վասն ծանուցեալ նպատակաց փափաքողներուն յարուցանել փոխադարձ անվստահութիւն և երկպառակութիւն՝ ի մէջ այս երկու սահմանակից տէրութեանց։ Միայն Թուրքիոյ մահուշափ թշնամի մի, կամ մատնիչ և անխոհեմ Մահմետական մի կրնայ ցանկալ որ վէճ և կռիւ ծագի՝ ի մէջ Թուրքիոյ և Ռուսիոյ, յորմէ ամենեին օգուտ մի չեն կրնար ունենալ՝ մեր հաւատակիցք։

«Օսման, որ Թուրքիոյ մօտ առևտրական քաղաքն է, չկրնար չհասկանալ զմեծամեծ օգուտներն, որ կրծագին այսպիսի բնական և փոխադարձաբար օգտակար յարաբերութիւններէն՝ ի մէջ երկու սահմանակից տէրութեանց։ Այս խաղաղասիրական տեսակէտին մէջ Օսմանցին ապրելութիւնը կրնայ հիմնաւորապէս օգտակար լինել։ Հարիւր թէ 36 ժամու բացակայ զբաղնուկով՝ ի թագաւորանիստ ժայրաքաղաքէն Թուրքիոյ, Օսման բարոյական պարտաւորութիւն ունի մեր հայրենեաց առջև, ցուցանել զայն բարւոք տեսութեամբ՝ առ բնակիչս Անատոլուի, տալով նոցա զօրինակ քաղաքական բարւոք կառավարութեան, զգուշաւոր խնայողութեան և անաչառ ոստիկանութեան։ Իւր մէջ հաստատուած համալարանին, կրթարանաց և կրօնական ու աշխարհական զպրոցաց միջոցաւ, թող լուսաւորէ զժողովուրդը և քարշէ զանմենը յոյժ ամիտ զիտութիւն։ Օսմանցի դատարանները թող ամենուն ուղղութեամբ և անաչառապէս հաստատանեն զարդարութիւն։ Մեր հաւատակիցներն ամեն կոչմն թող դան ատ առ՝ ի հարատանալ ո՛չ միայն նիւթապէս, այլև խղճականապէս և բարոյապէս, և որպէսզի սովորին միանդամայն իրարու հետ բարեկամաբար և խաղաղութեամբ ապրիլ՝ ի միասին, քաջ ճանաչելով թէ վէճերը չեն որ կօգնեն օրթոտօքս Եկեղեցոյն՝ և ո՛չ կրնայ բարբարութիւն, այլ ազնիւ զարգացմանը համար՝ ի զործ դրուած հանդարտ և յարատև ջանքն. որով միայն կրնան բարւոքել իրենց ապագան։ Թող Օսմանն ևս առաւել սեղմել դիպաերն փոխադարձ բարւոք յարաբերութեանց, որք հաստատեալ են՝ ի մէջ Ռուսիոյ և Թուրքիոյ և թող աշխատի՝ ի զործ դնել զառաքելութիւն իւր՝ զյանձնեալն իրեն յաշխարհագրական դրութենէ իրմէ, զործակից լինելով առ կերպիւ բարօրութեանն Ռուսիոյ։ Եկեցէ՛ և երջանկացէ՛ Օսման, կեցցէ՛ն և երջանկացին բնակիչք նորա։

ԱԶԳԱՅԻՆ

Սուրբ Էջմիածնայ Աբարաք ամենազրոյն Սեպուհեմբերի տեսարանին մէջ հեռաւոր նուէրներն ու նպաստներն կրաւանեմք, որք եղած են մայր Ս. Աթոռոյն Նորակառոյց ճեմարանին.

ԲԻՒՐԵՂԵԱՑ ՋԱՀ

Օտեսայի մեծապատիւ պարոնայք Յովհաննէս Գասպարեանցը, Գրիգոր Աբթարեանց, Յովհաննէս Երիկեանց և Յարութիւն Փոփեան՝ ի զարդ և ի պէտս հանդիսարանի Նորակառոյց ճեմարանի մայր Աթոռոյս՝ մի բիւրեղեայ դեղեցկաձև ջահ նուիրեցին, որ գնուած է 335 ռուբլեօք։

Կը փութամք դրատեալ յիշեալ պարոնայից այսպիսի ջերմեռանդ զգայմունքը, և հրապարակաւ շնորհակալութիւն փոխանակել նոցա։

ՈՐԴԵԳԻՐՔ

Վսեմա. Յովհաննէս իշխան Մանուկ պէյ, Բարեգործական ընկերութիւնն Նորնախիջևանայ, մեծա. Կարապետ Անուշեանց, և մեծա. Կարապետ Կողզեալեանց ի Հաշիւ Գոզոյեանցի բարեհաճեալ են մէն մի (բոլորն 4) որդեգրեալ տարեկան ծախքը նուիրել Նորակառոյց ճեմարանի։

Հրապարակաւ խորին շնորհակալութիւն կը մատուցանեմք յիշեալ բարեպաշտ անձանց և ընկերութեան, որք այսպիսի բարենպաստակ նուիրատուութեամբք կընպաստեն ճեմարանի, և այլոց նախանձելի օրինակ կը հանդիսանան։

ՆՈՒԻՐՔ Ի ՆՊԱՍՏ ՃԵՄԱՐԱՆԻ

Ուրախ եմք մեծապէս՝ զի ի բաղում տեղիս և ի կողմանս մեր սիրելի ազգայնոց մէջ հետզհետէ արժանաւոր համակրութիւն կը գրաւէ մայր Աթոռոյս Նորակառոյց ճեմարան։

Այս համակրութիւն արդեամբք արտայայտուելով՝ անչուշտ եմք՝ որ ճեմարանի ապագայն բարեյաջող՝ արդիւնաւորուած՝ թէ վեհ. Հայրապետի անխոնջ ջանք և բարի նպատակ՝ և թէ համայն ազգիս իշձեր և ակնկալութիւններ պիտի պատուին ի պայծառութիւն և ի պանծալի փառաւորութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց։

Արդարև այսպիսի ծանրակշիռ արժանիք ունեցող համակրութիւն որքան անհրաժեշտ և կարևոր է Նորակառոյց ճեմարանի նպատակին յաջողութեան և արդիւնաւորութեան համար, նա մանաւանդ Նորա յարատև ապահովութեան լծորդ և առաջին պիտոյից մին լինելով՝ գնդեսական մասն, որոյ համար ՌԵԺ խրօսուիր՝ կը ղրկուի ճեմարան. ոմն պիտի մատակարարէ և առատաձեռն լցուցանէ զայն, եթէ ոչ ժողովուրդն, և այս համակրութեամբն միայն կ'իրագործուի։ Ուստի ասացինք, որ ներկայ բարեդուշակ համակրութիւնն ոչ սակաւ յաջողութիւն և մխիթարութիւն կընծայէ ճեմարանի ապագային։

ՆՈՐ ԱՆԴԱՄՔ ՍԻՆՕԴԻ

Գերա. Մկրտիչ և Երեմիա եպիսկոպոսունք և արժա. Ներսէս Թիւտավերեան և Գրիգոր տէր Մատթէոսեան վարդապետք՝ կարգեցան ի պաշտօն անդամութեան Սինոդի։

ՓԱՐՈՍ

Այս պատկերազարդ տետրակն, որ ժամանակ առ ժամանակ՝ ի լոյս կընծայուի՝ ի Մոսկուա խմբագրութեամբ պարոն Զարմայր Մսերեանց դիտնական երիտասարդին. և որոյ երկրորդ տետրակն ընկալաք յանցելում շաբաթու, բանասիրական դիտելեաց վրայօք պատուական և աղդօգուտ յօդուածներ կը հրատարակէ։

Այս երկրորդ տետրակին բովանդակութեան գլխաւոր յօդուածները հետևեալներն են.

Հայոց կաթուղիկոսաց թղթակցութիւնք Հռոմայ պապերի հետ և թուղթ Աղէքսանդր Ա. կաթուղիկոսին Հայոց առ Գէորգ Դ. Պապն։

Աղդային բարերարք վերջին դարու։ Ա. Մերզայեան Մանուկ պէյ և Հնչէշեան Հայոց եկեղեցին։ Բ. Գասպարեանց և Նորա աշխատանքն՝ ի Մոսկուա։

Նապ—Լատին Շահ Պարսից, պատկերաւ։

Խիվայի Նուաճումն, պատկերաւ և աշխարհագրագրով։

Քէվլեր դերմանացի երևելի ասաղարաչին, պատկերաւ։

Իշխան Մատթէոս և մատենադարան Դ. Ց. Լազարեանցի։

Յովհաննէս Այվազովսքոյ նոր պատկերն։

Մահ Մսերայ մագիստրոսի Մսերեանց, երկու պատկերօք։

Կ. Պոլսոյ ազգային գործքերը միշտ ցաւալի վիճակի մէջ կը գտնուին և ազգային լրագրաց իրարու հետ եղած բանակռուութիւնքն կը շարունակին՝ ի զզուանս և՝ ի յուսահատութիւն ազգասիրաց։ Իրաց այս տխուր վիճակը, ազգային հոգևոր իշխանութեան այս անիշխանութիւնը հարկաւ իւր ճնաւակար ազդեցութիւնն ունի դաւառաց մէջ. որոց վերայ կեդրոնական վարչութիւնն կամ ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովն կոչուածը՝ կը թերի և բռնութիւն կը բանեցնէ անոնց վերայ՝ ազատութեան և Սահմանադրութեան պատրուակին ներքև։ Յիշեալ ընդհանուր ժողովը՝ 3—4 միլիոն Հայ ժողովուրդ կը ներկայացնէ ըսողներ կան...։

«Բայց մեք ազէկ գիտենք, կըսէ Մ-էս, որ ընդհանուր ժողովոյ ներկայ անդամոց ամբողջութեան քուէն հազիւ 1500—2000 թիւ կը կազմէ։ Արդ այս թիւն ի՞նչպէս 3—4 միլիոն ժողովրդեան մը կամքը փոխանորդաբար կրնայ ներկայացնել. և այս թուով կազմուած ընդհանուր ժողով մը՝ ի՞նչպէս կրնայ օրինաւոր համարուիլ։

«Այդ անձինքը՝ (այսինքն քաղաքական ժողովոյն քանի մը անդամք) կը շարունակէ Մ-էս, Մշեցիները Սամաթիացւոց դէմ կը հանեն, իրենք ալ ծեծ կուտեն և խրիմեանի վրայ կը ձգեն։ Ժողովրդեան ինքնասիրութիւնը կը վիրաւորեն, կը զրպարտեն, կանպատուեն, և երբ իրենց դէմ գրգռեալ կը տեսնեն, պատասխանատուութիւնը խրիմեանի վրայ կը ձգեն. «Պատժէ, կըսեն, և ընդհանուր ժողովոյ դումարման երաշխաւորութիւն երբէ կըսեն ևայլն»։

Այս քանի մը տողերը բաւական են, կարծեմք, մեր ընթերցողաց հասկացնելու համար թէ Կ. Պոլսոյ ազգային գործքերը ինչ յուսահատ և տխուր կացութեան մէջ կը գտնուին։

Ամենապատիւ Խրիմեան Ս. Պատրիարքը, ենթադրելովթէ կերպիւ իւիք, ինքն է պատճառն այս խառնութեանց, հարկ համարեցաւ իւր հրաժեշտը տալ ընդհանուր ժողովոյն, և իբրև Յովնան՝ զահ լինել, որպէսզի ազգային խառնութիւնը դադարի, եթէ կարելի է։

Ահաւասիկ Նորին Սրբազնութեան առ բարձրագոյն Դուռն յուզարկած տաճկերէն հրաժեշտին թարգմանութիւնը, զոր Մ-էն առինք։

Առ վսեմա. Նախարարն արտաքին գործոց.

Օգոստա. կայսեր հովանաւորութեան ներքև՝ չորս տարիէ հետէ ազգիս պատրիարքութեան պաշտօնը կը վարեմ անարժանարար։ Փափաքելի էի ինձ այս միջոցաւ խնամանն ծառայելցէրութեան և՝ ազգիս. սակայն ժամանակէ մը՝ ի վեր նուաստութեանս անձին եկած տկարութեան պատճառաւ սոյն պաշտօնն ըստ արժանւոյն վարելու անկարող դտնուած եմ։ Հետևաբար կը խնդրեմ որ իմ օրերս վեհափառ Կայսեր կենաց աղօթող ըլլալով անցուցնելու համար շնորհ ընէք արձակել զիս պատրիարքութեան պաշտօնէն, և Ձեր վսեմութեան բարձր համակրութիւնն ու խնամքը՝ ինչպէս յառաջ՝ նոյնպէս և յայսմ հետէ ազգիս և նուաստութեանս վրայ շարունակել։

Մեր նախընթաց թուով՝ փարիզի Մուրատեան վարժարանին դպրոցականը և ծախու հանուելին՝ ցաւօք սրտի ծանուցանելով մեր ընթերցողաց՝ յայտնեցինք թէ նոյն ազգային վարժարանն բարեյիշատակ Սամուէլ Մուրատեանի ազգասիրական կտակին արդիւնքն է, հետևաբար ընդհանուր ազգին կը վերաբերի այն և ոչ վենետկոյ Մխիթարեան Միաբանութեանն. որում դպրոցին տեսչութիւնն միայն յանձնուած է ըստ զօրութեան կտակին։

Ներկայ թուոյս արժան կը համարիմք հետեւեալ տեղեկութիւններն եւս յաւելցնել։

Ցիշեալ կտակին գումարը՝ որ ասկեց քառասուն տարի յառաջ յանձնուեր է վենետկոյ Մխիթարեան Միաբանութեանն, երկու միլիոն ֆր. էր. զոր շահաբերութեան դրուելով անշարժ կալուածոց վերայ, չորս միլիոն ֆրանք եւս շահ բերեր է 'ի միջոցի քառասուն ամաց. ըսել է թէ յիշեալ կտակին դրամագլուխը եւ բերած շահը 'ի միասին հաշուելով, վեց միլիոն ֆրանքի ազգային դրամոց դումար մը՝ վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան ձեռքը ապարդիւն եւ անգործ մնացած է հակառակ կամայ կամ կողին, ազգային մեծ բարերար բարեյիշատակ Սամուէլ Մուրատին։

—Վսեմա. Միրզա Նաքուշ խան Մելքոն, որ Լոնտոնի դեսպան և օգնստափառ Շահին սիրելի վսեմա. Մելքոն խանին հայրն է, անցեալ ամսոյ 20ին շաբաթ օրն աւստրիական շոգենաւով հասաւ Իզմիր և Պոլսէն դալով, և հետևեալ օրը կէսօրին շարունակեց իւր ճանապարհորդութիւնն յԱղէքսանդրիա երթալու։

Ցիշեալ հայկաղուն պաշտօնակալն, որ կենցաղագէտ, լեզուագէտ և խոհական անձ մին է, Պարսից կառավարութեան կողմանէ ընդհանուր հիւպատոս և դեսպանական գործակալ (Agent diplomatique) կարգուած է Եգիպտոսի մէջ։

—Ի պատճառս մի քանի ծառայութեանց մատուցանելոյ Ռուսիոյ կայսերական կառավարութեանն 'ի մեծա. թագաւոր ազգայէ Յակոբեան, որ երեւելի Հայ սեղանաւոր է յԱղէքսանդրիա, օգոստափառ Զարն հաճեցաւ պատուելագնա պրբոյն Սթանիսլաւա կարգին շքանշանաւ։

ՅԱՆՈՍԻ

ՅԱՂԱԳՍ ՊԱՊԻՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՅ ՆՈՐԱ ԵՒ ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ի տպարանի սրբոյ կամարակ Էջմիածնի 'Ի Վաղարշապատ 1873.

Գերա. Այվազեան Գաբրիել սրբազան արքեպիսկոպոսին բարգմանութեամբն Ս. Էջմիածնի տպարանէն 'ի լոյս ընծայեալ այս պատմական գիրքն ամեն բանասիրաց խորին ուշադրութեանն արժանի է։

Հաւանականաբար գերմանացի հմուտ աստուածաբանի մը գրչէն ելած ստեղծական անուամբ՝ գրեթէ քրիստոնեական հաւատոյ ամեն մասանց գեղծմանց վրայ իմաստութեամբ կը խօսի, եւ մասնաւորապէս պապական եկեղեցւոյն հետզհետէ ընդունած սխալ վարդապետութիւնները մէկիկ մէկիկ կը նշանակէ։ Յանոսը վերջին պապական ժողովէն յառաջ գրուած՝ սակայն ժողովոյն ընդունելիք հերետիկոսական վարդապետութիւնը ժամանակին նշանները գուշակելով կը խայտառակէ. եկեղեցական իրաց եւ անցից խորին հմտութիւն, առողջ եւ անաչառ դիտողութիւն կերեւի այս ընտիր գրքին մէջ։

Իսկ հայր Կեթեի առ Պիոս Թ. Վատիկանեան ժողովոյն եւ իւր կանոնակին դէմ գրած հռչակաւոր բողոքոյն բարգմանութիւնը՝ սոյն գրքին յաւելուածն է եւ կարժէ որ ամեն մարդ կարդայ։ Թարգմանութեան գեղեցկութիւնը գիրքին արժէքը աւելցուցած է։

Գինն է ամենայն տեղ 36 դուրուշ։

Նաեւ՝ սուրբ Էջմիածնի մամլեն հրատարակուած են հետեւեալ պատմական գիրքերն,

ՁԱՅՆ ԲԱԶՄԱՅ. գին 19 դուրուշ։

ԱԶԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ. Սինաս վարդապետի Համդեցւոյ, գին 10 դուրուշ։

ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆԻ ԿԵԱՆՔԸ. Գործ Ֆիլդինգնդ Շմիդի. բարգմանութիւն ի գերմաներէ՝ Փ. Վարդանեան։ Գին 7 դուրուշ։

ՍԻՄԷՈՆ վարդապետի Ապարանցւոյ սակս Պանիւռնեանցն զարմի եւ Մամիկոնեանցն սեռին։ Գին 10 դուրուշ։

ՈՒԽՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Հատուած առաջին. Պատմութիւն Հայոց։ Գին 25 դուրուշ։

ԱԲՐԱՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՐՇՏԱՑԻՈՑ. պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր Շահին Պարսից։ Գին 20 դուրուշ։

ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՒԱԳԻ Պատմագրութիւն։ Գին՝ 37 դուրուշ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ տօնից անցելոց Յեւանայ վանուց։ Գին՝ 12 դուրուշ։

Վերոյիշեալ մատեաններն Իզմիրի մէջ կը վաճառին 'ի գրատունն Արշալուսոյ, որ 'ի Սելվիլի խանն։

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա 3, Նոյեմբեր։

Քանի մը օր հորիզոնը ամպամած լինելէ ետև, երէկ պատուական և արեւափայլ օր կընէր, իսկ այսօր դարձեալ անձրևայնն է օդը յորմէ երկրագործութիւնը կարօտութիւն ունի։

—Քաղաքիս անդորրութիւնը և բարեկարգութիւնը կը շարունակուին միշտ բարձրագոյն վերատեսչութեամբ մեր բարեգութ կուսակալ վսեմա. Սիւրէյա փաշային։ Իսկ ժամանակ առ ժամանակ պատահած փոքրիկ դողութիւններն և եղեռնագործութիւններն՝ մեր ոստիկանութեան ուշադրութեանն և անաչառ հարցաքննութեանն ենթակայ կը լինին միշտ։

—Լոնտոնի Պարսից դեսպան վսեմա. Մելքոն խանը՝ որ տակաւին 'ի Կ. Պոլիս կը գտնուի, անցեալ ամսոյ 29ին երկուշաբթի օրն այցելութեան գնաց ամենապատիւ Խրիմեան սրբազանին, որուն հետ հաճեցաւ բաւական ժամանակ բազում սիրով տեսակցելու։

—Իտալիոյ օսմանեան դեսպան վսեմա. Սարդիս էֆէնտին, որ 2—3 ամիսէ 'ի վերջ 'ի Կ. Պոլիս կը գտնուէր թոյլտուութեամբ (քօնժէ), անցեալ ամսոյ 27ին մեկնեցաւ՝ 'ի Հռոմ երթալու։

—Պարսից պաշտօնական զօրապետ Ներիման խանն՝ անցեալ ամսոյ 24ին յԵրուսաղէմ գնաց իւր մասնաւոր գործոցը համար։

—Օտէսայէն հասած վերջին լուրերը կը հաստատեն թէ նոյն քաղաքին Զարիֆի կոչուած հարուստ յոյն վաճառականը մահկացեր է։

—Հոլանտական Էնդկատանէն հասած վերջին լուրց նայելով՝ Ատիէնի դէմ ըլլալու արշաւանքը ամսոյս 11—23ին ճամբայ պիտի ելլէ։

—Ռուսիոյ վեհափառ կայսրը՝ օգոստ. Սուլթանին ընծայ յուղարկեր է յարդով լեցուած երկու արջ ահագին մեծութեամբ։ Այս գաղանները ուրուն արժէքը յոյժ մեծագին կը համարուին, ըստորում անոցմէ մէկը Աղէքսանդր կայսրն որսորդութեան մէջ սպաններ է և միւսը՝ Նորին Վեհափառութեան եղբայրը՝ Նիկողայոս Մեծ—Դուքսը։

—Զինի վերջին փոփոխութեանց, Եգիպտոսի պաշտօնէից խորհուրդը՝ հետևեալ կերպիւ բաղկացեալ է. բարձրագոյն Մէհէմմէտ Թէֆիք փաշա դահաժառանգ իշխանն՝ ներքին գործոց պաշտօնեայ, բարձր. Հիւսէյն փաշա իշխանն՝ պատերազմի պաշտօնեայ, վսե. Նուպար փաշան՝ արտաքին գործոց պաշտօնեայ, վսե. Իսմայիլ Սաադք փաշան՝ եկամտից, վսե. Շէրիֆ փաշան՝ արդարութեան և վսե. Բիազ փաշան՝ հասարակաց դատաստարակութեան պաշտօնեայ։

Բարձրագոյն Խրտիմն իրեն վերապահեց պաշտօնէից խորհրդոյն նախագահութիւնը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Ի պատճառս առևտրական և դրամական ընդհանուր ոստիկ տագնապին՝ որ կրտիրէ Եւրոպիոյ և Ամերիկայի մէջ, անվստահութիւնն երթալով կաւելնայ վաճառականաց մէջ և կը վախցուի որ չըլլայ թէ այս ձախորդ վիճակը եւս առաւել տարածուի. քանզի բազմաթիւ մեծ տնանկութիւններ կը ծանուցուին յամենայն կողմանց։ Իրաց այս դժբաղդ կացութեան մէջ բնական է որ առևտրական գործքերն յոյժ տկարանալ լինին։

Ամիսներ մեծ հանդարտութեան մէջ կը դտնուի և այս շաբթու վաճառումի չեղաւ։

Բամպակը նմանապէս չառզուիր և այսօրուան գինը՝ 440—430 դուրուշէ մինչեւ ապրանքին համար։

Բէօքպազարայէն 150 քուրձ վաճառեցաւ վասն շահագիտութեան (սբէքիւլասիօն) 185—190 դուրուշի կենդինարն Պասրայի և 180ի Գայաճքինը։

Ոչխարի բուրդը կուզուի. Գառահիսարի անլուայ բուրդը՝ 325 դուրուշի վաճառեցաւ կենդինարը, և Կեսարիայինը՝ 322ի։

ՀԻՒԱՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ ԶՂԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Մարդոյս ՀՂՍՍԻՆ դրութեան (սիմբիմ) շատ յոգնած քաջալերական ախտ մըն է և ջիղերուն ամենափոքրիկ շարժումը կամ գրգռութիւնը վնասակար է յոյժ. վասն զի ուր գտնելու է անոր դեղը։ — Միակ դեղը այս է. քիչ խմէ գինի, գարեջուր, և ոգելից ըմպելիք. և աւելի աղէկ կըլլայ որ բոլորովին հեռանաս անոնցմէ, և ամենեին չխմես. նմանապէս խահվէ մի խմեր, և անոր տեղ թեթև թեյով (չայ) գոհ եղիր։ Կարելի եղածին չափ մարքուր օդ ծծէ. ամեն գիշեր իմ դեղահատերէս երեք կամ չորս հատ կըլլէ, շատ մը կեր և համեմունքէ (սալցա) հեռի կեցիր։ Եթէ այս օգտակար կանոնները ճշդութեամբ 'ի գործ դնելու ըլլաս, միտքդ շատով պիտի հանգստանայ, մարմինդ առողջ պիտի ըլլայ և պիտի մնայս թէ ջղաց շարժումն ունեցար։

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ԵՐԻԿԱՄԱՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ թէ կղզանքը չափէն աւելի ջրալից կըլլան կամ բաւական չեն ըլլար, թէ բարը կամ աւազը երիկամանց կը հանին կամ թէ առնոց մէջցաւեր կը գտնուին մէջքին համապատասխանած մասը։ Այս ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլլօուէի դեղահատերը ասնուլ տպեալ հրահանգաց համեմատ և անոր սպեղանիովը շփել երիկամանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը։ Այս դարմանը անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ ուրիշ դեղերը զուր տեղը գործածուած պիտի ըլլան։

ՍՏԱՄՈՔՍԻ ԱՒՐՈՒԻԼԸ

Ո՛ր և է դեղ մի չկրնար ստամոքսի զօրութիւնը նորոգել և աղէկցնել զայն շուտով՝ ինչպէս այս դեղահատերը. որոնք անբարխանութեան կամ վատթար կերակուրէ պատճառուած բոլոր թերութիւնը կը վանեն և կը հանին 'ի լեարդն (էուրա ֆիյիր), որուն գործողութիւնը կը կարգադրեն. ջիղերու սաստիկ ձգման (սբասմ) դեպքերու մէջ աբանչելի ներգործութիւն մի ունի և լեղի ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը լաւցնէ։

ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ԹՈՔՈՒՌԱՋԻՑ (պրէնէր) ՀԱՋ ԵՒ ՀԱՐԲՈՒՂԻ

Շնչաւորութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը ամեն ախտէն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտանգաւոր է։ Ասոնց գործողութեանց անկարգ ընթացքին առաջինը՝ չանները կրնան միշտ կարգադրուիլ Հոլլօուէի հռչակաւոր դեղահատից միջոցաւ։ Ասոնք շուտով կը դարմանեն արեան որ և է առաջանակեայ անշարժութիւնը, կը թեթեւցնեն խցուած ընդերկիները, կը բարեխառնեն շնչառութեան սաստիկ արագութիւնը և կարողութիւն կուտան շնչափողին ու թոքերուն դիւրութեամբ ու կանոնաւորապէս գործելու։ Այս դեղահատերը՝ իրենց մաքրողական զօրութեամբը կը սրբեն արիւնը ամեն աղտեղութիւններէն, և այս եղանակաւ կը զօրացնեն զղրութիւնը (սիսթէմ) ընդդէմ ծիւրական ախտի, ընչաքաղութեան, և ուրիշ թոքային սակաւութեանց։

ՏԿԱՐԱՑԵԱԼ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԲԱՂԿԱՑՈՒԹԻՒՆՔ

Տկարութեան, թուլութեան և ջղացաւութեան դէպքերու մէջ, որոնք որ և է բնական կամ դերբնական չափազանցութենէ յառաջ եկած են, այս դեղահատից այլայլիչ և նորոգիչ ներգործութիւնը մեծապէս օգտակար է. քանզի մարսողութիւնը կը վերահաստատէ, մարմնոյն ամեն հիւթոց թափումը կը կանոնաւորէ, ջղային դրութիւնը կը զօրացնէ, հիւանդին փոքը կը յարդարէ և վերջապէս առողջութիւնը ձեռք կը բերէ։

Հոլլօուէի դեղահատերը ամենէն օգտակար դեղերն են հիւանդութեանց համար։

Շնչարգելութիւն,	Յոգացաւութիւն,	Թոքացաւութիւն,
Մանկային ախտ,	Տեռատեսութիւն,	Ցաւք որովայնի,
Խիթ (սանճը),	Ջրդողութիւն,	Մրսարգելութիւն,
Հարբուղի,	Անմարսողութիւնք,	Բորբոքումն,
Ծիւրական ախտ,	Դալուկն,	Ախտք ընդերաց,
Թանչ (պէսանդրէ),	Բարախիւն սրտի,	Անկանոնութիւնք կանանց,
Խոյլ պարանոցի,	Քար կամ խիճ միզա-	
Վերնատութիւն,	նոցի,	Մորթային հիւանդութիւնք,
Լերդի հիւանդութիւնք	Գլխացաւութիւն,	
Փողացաւ,	Ափրոդիտեան ախտք,	Խցողութիւնք։

Գիտելի արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն լեզուով որոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ 'ի տեղեկութիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ։

Այս դեղահատերը, որ կրշինուին Հոլլօուէ բժշկին անմատչելի վերատեսչութեամբը, կը վաճառուին իւր գործարանը 'ի Լոնտոն, Օրթոբրա կոչուած փողոցը թիւ 533, 'ի գին 1 և 1 ուկէ շիլինի, 2 3/4 և 4 1/2 շիլինի տուփը, ըստ մեծութեան տփոց։

Խմբագիր—տէր լրագրոյս,
Գ.-ԼՈ Գ. ՊԱԼԵՏԱՂԵԱՆ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ՍՐԱՐԱՏԵԱՆ